



YEREVAN STATE UNIVERSITY



2017 AURORA DIALOGUES | ԲԱՅ
ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ | ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԴՈԿՏՈՐ ՀՐԱՉ
ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ

Dr. Hratch Tchilingirian is an intellectual entrepreneur and an activist sociologist. In recent years he has drawn attention to the plight of minorities and Christian communities in the Middle East, especially in academic and policy-making circles. As a public intellectual, his research, thinking and projects aim to make heritage identity, culture and language a living experience, especially in diasporic life.

Following his PhD in sociology at the London School of Economics, he directed research on Eurasia and lectured at Cambridge University’s business school (2003-2012). Since 2012, he is an associate member of the Faculty of Oriental Studies at University of Oxford, focusing on Middle Eastern and Armenian studies, with a particular focus on cultural identity politics, homeland-diaspora relations, sociology of religion, and inter-ethnic conflicts in the Middle East and Eurasia. Dr Tchilingirian has lectured internationally and is the author of numerous studies, academic publications and popular articles (www.hratch.info).

Dr. Tchilingirian has held executive positions in academic institutions and charitable organizations and has served communities in various capacities and leadership positions in the United States and the United Kingdom for over three decades. He remains deeply engaged in community life and takes active part in civic and professional projects.

Դոկտոր Հրաչ Չիլինգիրյան ինտելեկտուալ ձեռնարկատեր է եւ ակտիվիստ-սոցիոլոգ: Վերջին տարիներին նա աշխարհի ուշադրությունն է հրավիրում Մերձավոր Արեւելքում քրիստոնյա համայնքների եւ փոքրամասնությունների իրադրության վրա, հատկապես՝ գիտական եւ քաղաքական որոշումներ կայացնողների շրջանակներում: Որպես մտավորական՝ նրա ուսումնասիրությունները, մտքերը եւ ծրագրերը նպատակ ունեն պատմական ինքնությունը, մշակույթը եւ լեզուն դարձնել կենդանի փորձ հատկապես սփյուռքի համար:

Լոնդոնի տնտեսագիտության դպրոցում (LSE) սոցիոլոգիայի ոլորտում ասպիրանտական ծրագիրն (PhD) ավարտելուց հետո դոկտոր Չիլինգիրյանը սկսեց դասախոսել Քեմբրիջի համալսարանի բիզնես դպրոցում եւ ստանձնեց Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրենի պաշտոնը (2003-2012): 2012 թվականից նա Օքսֆորդի համալսարանի Արեւելագիտության բաժնի անդամ է. զբաղվում է հայագիտական եւ մերձավորարեւելյան ուսումնասիրություններով, մասնավորապես՝ ուսումնասիրելով մշակութային ինքնության քաղաքականությունը, հայրենիք-սփյուռք կապը, կրոնի սոցիոլոգիան եւ միջէթնիկական հակամարտությունները Մերձավոր Արեւելքում եւ Եվրասիայում: Դոկտոր Չիլինգիրյանը դասախոսում է աշխարհի տարբեր համալսարաններում եւ բազմաթիվ ուսումնասիրությունների, գիտական հրապարակումների եւ հոդվածների հեղինակ է (www.hratch.info):

Դոկտոր Չիլինգիրյանը ղեկավարել է մի շարք գիտական հաստատություններ եւ բարեգործական կազմակերպություններ եւ ավելի քան երեսուն տարի ծառայել է համայնքներին՝ ԱՄՆ-ում եւ Միացյալ Թագավորությունում: Նա ներգրավված է համայնքային կյանքում եւ ակտիվորեն մասնակցում է քաղաքացիական եւ մասնագիտական նախագծերում: